Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ԸՆԴ. ՀՈՎԱՆԵԱՆ

ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ ՇԱՀՆՇԱՀԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒ

ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

ԹԱՆԻՐԻՉԻ ՀԱՅՈՒՀԵՆԱՑ ԹԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1904—1905

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ՄՕ

277

ԹԱՒՐԻԶ

1905

Ատրպատականի Հայոց Թեմական Արաքատիպ

Ցիօառակ վաղամեռիկ եղիսաբէթ Միրզաբէգեանի

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

Բոլորելով ներկայ 1904—5 ուս. տարեշրջանը՝ հասարակական սեղանի վրայ է դրուում ընկերութեանս գործունէութեան տեղեկագիրը։

Այս տարեշրջանում ընկերութեանս հաստատութիւնների թիւը գրեթէ նոյնութեամբ մնաց։ Փակուեցաւ Բարանդուղ գաւառամասի Բալանիշ գիւղի դպրոցը, ըստ որում իր սակաւամարդութեան պատճառով աշակերտների ցանկալի թիւ չէր տալիս։ Մեծ. Պրն. Տիգրան Ամիրիկեանի նախկին 4 երկսեռ դպրոցների վրայ աւելացան Ղարաջալուի և Ֆաղիբէգլուի նորաբաց դպրոցները, իսկ առաջիկայ 1905—6 ուս. տարում կբացուի մի դպրոց Մադուում, դարձեալ բարերարի հաշուով։

Երկրորդ տարին է, որ իգական սեռի, մասնաւորապէս քաղաքիս օրիորդաց դպրոցների կրթական մակարդակն աւելի բարձրացնելու համար ընդհ. ժողովի որոշմամբ ընկերութիւնս փակել է կար ու ձևի արհեստանոցները և նոցա փոխարէն առ այժմ բացել է դ. դասարան Ղալայի Ս. Աննայեան դպրոցում, ուր աւանդւում էին ձևագիտութեան հետ հետևեալ առարկաները՝ Ուսումն ս. գրոց, Հայոց լեզու, Թուաբանութիւն, Բնագիտութիւն, Գրականութեան պատմութիւն, Ընդհ. պատմութիւն, Հայոց պատմութիւն, Ընդհ. աշխարհագրութիւն, Նկարչութիւն և Երգեցողութիւն։ Շաբաթական 1 դաս լինում էր և ընթերցանութիւն. ընդամենը 27 դաս։ Ուսանում էին 9 հոգի։ Ուս. տարուայ վերջում հրապարակական հայցաքննութիւնից յետոյ, որ տեղի ունեցաւ Մայրենի լեզուից, մի քանի դլխաւոր առարկաներից և կար ու ձևից, 9 հոգին էլ արժանացան ստանալու աւարտման վկայական, այլ և իրաւունք՝ պաշտօն ստանձնելու երկ-

գասեան դպրոցներում։ Այդ դասարանին նպաստ է յատկացուել տարեկան 3000 դրամ։ Աւարտման վկայական ստացան հետեւեալ աշակերտուհիները.

Աֆթանդիլեան Արփենիկ,
Թովմասեան Սաթենիկ,
Մահտեսի-Աստուածատրեան Աշխէն,
Մէլիք-Բաբաջանեան Սաթենիկ,
Մէլիք Բաղդասարեան Շուշանիկ,
Միրզայեան Զարուհի,
Նազարբէգեան Աստղիկ,
Պատմաղրեան Թամար և
Տէր-Յակոբեան Թամար։

Ընկերութիւնս պահում է քաղաքիս Արամեան դպրոցում 2 որդեգիր (անցեալ տարի 3 հոգի էին, որոնցից 1-ը գնաց հայրենիք և այլևս չվերադարձաւ), Մեծ. Պրն. Տիգրան Աֆրիկեանի սաներից, ապագայում նրանց իրանց գիւղերի համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով։ Որդեգիրները զբաղուում են վարչութեան անմիջական խնամակալութեան ներքոյ։

Առաջնորդարանի և «Աղքատախնամ» ընկերութեան ցուցմամբ և խորհրդով ճանապարհածախք և անցագիր է մատակարարուել պանդխտութեան դիմոյ բաւականաչափ արկածեալների, նպաստ է յատկացուել քաղաքիս խեղճերին և կարօտ ընտանեաց։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ՍՏԱՑԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Վարչութիւնս 1904—5 ուս. տարեշրջանում շնորհակալութեամբ ստացել է հետևեալ նպաստները.

Պարոն Տիգրան Ամիրիկեանից Բսբաուու, Դիզաթէքէ, Ռահուա, Նախիջևան-Թէփէ, Փաղիբէգլու և Ղարաջալու գիւղերի երկսեռ դպրոցների տարեկան նպաստը՝ 15000 դրան,

Պարոն Ստեփան Տէր Օհանեանից Դէրէլէքի դպրոցի տարեկան նպաստը՝ 1200 դրան,

Պարոն Բաղդասար Մէլիք-Սարգսեանից 500 դրան, ստացած մի ինչ որ դատաստանական գործից։

Տիկ. Եղիսաբէթ Զոհրաբեանից 250 դրան, իր մշտական անդամավճարը,

Պարոն Համբարձում Առաքելեանից 300 կտոր 36 անուն դիրք, որ ըստ ցանկութեան յարգելի նուիրատուների բաշխուել է Հաֆթուանի, Մահլամի, Սաւրայի, Փայաջուկի, Ղալասարի, Հին-քաղաքի, Մարաղայի, Որմիի, Նախիջևան-Թէփէի, Դիզաթէքէի, Միանդուաբի-Թաղիաբադի, Դէրէլէքի, Արդաբիլի դպրոցներին, Ղայայի մանկական, կենդրոնական և ընկերութեանս քաղաքիս զրադարան-ընթերցարաններին։

Արժ. Տէր Ղազարոս քահ. Յովսէփեանից իր աշխատասիրած „Ակնարկներ Ուտիացի և Մահմեդական հայերի մասին“ գրքից 210 օրինակ, երկ-երկու օր. ցրուելու Ատրպատականի բոլոր դրադարան-ընթերցարաններին ու դպրոցներին, իսկ մնացածը վաճառել և ստացած դումարով հիմնել „Սահակ Մեսրովբեան“ անուն դրադարան Որմի դաւառի այն գիւղերից մէկում, ուր կարիքը մեծ է։ Սիրայօժար կերպով կկատարուի արժ. Տէր Հօր ցանկութիւնը։

Ընկերութիւնս ներկայ տարեշրջանում շնորհակալութեամբ նուէր է ստացել նաև իր հաստատութիւնների համար հետևեալ պարբերական հրատարակութիւնները խմբագրութիւններից և այլ կրթասէր անձնաւորութիւններից.

12 օր. պատկերազարդ «Պատանի», 20 օր. «Նոր Ջուղայի լրարեր» (15 օր. նուէր պ. Յովհաննէս Թամհարեանից, իսկ 5 օր. պ. Հայկազն Գյումճեանից), որից 15 օր. ուղարկուում է Սամասատի և Խոյի դպրոցներին, 5 օր. «Մուրճ» (նուէր պ. Սուրէն Ադամեանից), 2 օր. «Գութան», 2 օր. «Ձայն Հայրենեաց», 2 օր. «Գիտութիւն», 2 օր. L' Armenie, 1—1 օր. «Ապագայ», «Ձիրակ», «Անահիտ», «Armenia», «Բազմավէպ», (նուէր պ. Յ. Պալեանից) և «Երիտասարդ Հայաստան»։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ՏՈՒԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Ընկերութիւնս սոյն տարեշրջանում տուել է հետևեալ նպաստները.

Ղալայի „Ս. Աննայեան“ օր. դպրոցի դ. դասարանի տարեկան նպաստը՝ 3000 ղրան,

Սանիտարական խմբին անցեալ տարի քաղաքումս տիրող համաճարակի պատճառով 500 ղրան,

Պարոն Բժ. Պ. Ասլանեանին մի խումբ դաղթականների համար անցագիր գնելու՝ 200 ղրան,

Քաղաքումս ապրող խեղճերին և մի խումբ օտարութեան դիմող պանդուխտներին անցագիր և ճանապարհածախք՝ 312 ղրան,

Մի համաքաղաքացի ուսանողի նպաստ՝ 265 ղրան 50 կոպ.,

Ընկերութեանս 2 որդեգիրների թոշակը և դասական պիտոյքները՝ 176 դրամ,

Մի չքաւոր աշակերտուհու համար դասական պիտոյքներ՝ 8 դրամ։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԲԱԲԱՌՈՒԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԸ

Բարեանդուզ գաւառում

Դպրոցը բացուել է հոկտ. 5-ին և կանոնաւոր պարապմունքները սկսուել են նոյն ամսի 20-ից, 20 երկսեռ աշակերտների հետ, որոնց ամենամեծ թիւը եղել է տարուայ ընթացքում 35 աշակերտ և 25 աշակերտուհի, ընդամենը 60 հոգի։ Նորեկները կազմում էին մեծամասնութիւն։ Դպրոցն ունէր 3 բաժանմունք։ Ցաճախում էին նաև ասորի աշակերտ-աշակերտուհիներ։ Դիւղը զուտ թրքախօս լինելու պատճառով՝ յատուկ ուշադրութիւն է դարձուած հայոց լեզուի վրայ։ Անլիշելի ժամանակներից այս գաւառի հայ համայնքը թրքախօս լինելով՝ հոգեպարար երևոյթ է ներկայացնում այն հանգամանքը, երբ մայրենի բարբառը հնչում է հայ մանկան անմեղ շրթունքներում։ Պարզ է, որ այստեղ ուսուցչի աշխատութիւնը կրկնակի է՝ թուրքերէնի միջոցով ուսուցանել մայրենի լեզուն։ Միայն ցաւալի և խիստ նկատողութեան արժանի անպատեհութիւնն այն է, որ դաշտային աշխատանքի պատճառով սաների անկանոն յաճախելը խոչընդոտ է յարուցանում կանոնաւոր ու-

սուցման դէմ։ Ծնողների լուրջ ուշադրութիւնն է հրաւիրուում այս էական խնդրի վրայ։

Բարանդուզի հոգևոր հովիւ Արժ. Տէր Կարապետ քահ. Մանուկեանը տարուայ ընթացքում սովորեցրել է մի քանի նշանաւոր տօների շարականներ, կիրակնամուտի երեկոյեան երգեցողութիւն, Ս. Պատարագի արարողութիւնը (կէսից աւելի) և ազգային ու ժողովրդական երգեր։

Դպրոցը բոլորել է իր 6 ամեայ շրջանը և պահւում է ընկերութեանս պատուաւոր անդամ Մեծ. Պրն. Տիգրան Աֆրիկեանցի հաշուով։

ԴԷՐԷԼԷՔԻ ԴՊՐՈՑԸ

Սովուչքուղպում

Այս դպրոցը ներկայ տարեշրջանում ունէր 23 աշակերտ, 4 բաժանմունքով։ Ուսումը սկսուել է սեպտեմբերին և տևել է մինչ մայիս վերջ։ Չնայելով աշակերտների անկանոն յաճախելուն, որովհետև դաշտային զբաղմունքների ժամանակ օգնում են ծնողներին, բայց և այնպէս թափուած աշխատութիւնը ուսուցչի կողմից գոհացուցիչ կարելի է համարել։ Գիւղն ունի 120 տուն բնակիչ, որոնցից 80 տուն քուրդ, իսկ 40 տուն հայ և ասորի խառն։ Հայերից մօտ 14 տուն պարապում են երկրագործութեամբ, իսկ միւսները դարաներ (հողազուրկ դասակարգ) են։ Այստեղ էլ հայ գեղջուկը տառապում է աղքատութեան, տգիտութեան մարդախոշոշ ճիրաններում։ Խիստ ցաւալի է նկատել, որ ձմեռուայ բուքին, սառնամանիքին երեխաներից շատերը տրեխ անգամ չունին ոտներին։

Դպրոցը թէև հիմնուել է 1900 թուին, բայց ցարդ զուրկ է իւր առանձին շէնքից. նա զետեղուած է մի մաս-

նաւոր տան մէջ, որ ի հարկէ, շատ անյարմարութիւններ է ներկայացնում։ Վերոյիշեալ հանգամանքներում գտնուած տեղացուց անկարելի է պահանջել, որ ինքնաբերաբար հոգայ այդ աչքի զարնող պակասութիւնը, ուստի մնում է, որ մի կրթասէր անձնաւորութիւն ձեռնամուխ լինի այս անհրաժեշտ գործին։ Մօտ 200 թումանով կարելի է շինել տալ 2—3 սենեակից բաղկացած մի շէնք...։

Դպրոցիս բարերարն է Մեծ. Պարոն Ստեփան Տէր Օհանեանը, որ պարբերաբար տարեկան 1200 ղուռն նպաստ է տալիս։

ԴԻԶԱԹԷՔԷԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԸ

Բարեգործում

Այս երկսեռ դպրոցը, որ հիմնուել է 1898 թուին, բացուել է հոկտեմբերին, իսկ կանոնաւոր դասաւանդութիւնը սկսուել է նոյեմբերից։ Սկզբում յաճախում էին 11 հոգի, նոյեմբերին այդ թիւը հասաւ 20-ի, 4 բաժանմունքով։ Հինգ ասորի աշակերտ, որոնք նախընթաց տարիներում սովորում էին այս դպրոցում, գնացին իրանց ազգային դպրոցը, իսկ նոցա փոխարէն աւելացան 3 հայ աշակերտ, այնպէս որ սաների թիւը մնաց 18, որոնք յաճախում էին մինչև դաշտային պարապմունքների սկսուելը։ Ուսուցումը տևել է 7 ամիս 16 օր։ Իգական մասը բաղկացած էր 2 բաժանմունքից 24 աշակերտուհիներով, որոնցից 11 ասորուհի։ Դասերի շատութեան և տեղի սղութեան պատճառով տարուայ սկզբին արձակուեցան ասորի աշակերտուհիները, որով մնացին 11 հոգի։ Աշակերտ աշակերտուհիների թիւը 29 էր։

Այս դպրոցն էլ նոյն պայմանների մէջ է գտնուում,

ինչ որ Բաբառուինը։ Շնորհիւ Բարանդուզ գաւառի 2 երկսեռ դպրոցների տեղացի հայն կարողացել է պահպանել իր ինքնուրոյնութիւնը, չնայելով խիստ աննպաստ հանգամանքներին, դաւանաբանական նեղսիրտ մրցումներին...։ Այս դպրոցի ծախքը 1898 թուից մարդասիրաբար յանձն է առել և հոգում է նոյնպէս Մեծ. Պրն. Տիգրան Ափրիկեանը, բայց ափսոս, որ դպրոցը յատուկ շէնք չունի։ Գիւղում ծախւում է մի տուն, որ ունի 1 երկյարկ սենեակ իւր նախասենեակով և 5 էլ ուրիշ ծածկոց։ Կարևոր նորոգութիւններն անելով կարելի է յարմար դպրոցական շէնք դարձնել։

ԹՈՎԼԱԼԱՐԻ ԿԱՄ ԹԱՂԻԱԲԱԴԻ

«ԱՐԱՄ ՂԱԶԱՐԵԱՆ» ԴՊՐՈՑԸ

Միանդամայն գահատամնատում

Այս դպրոցը բոլորել է իւր երկամեայ շրջանը, շարունակուելով նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։ Անցեալ տարուայ տիրող համաճարակի պատճառով դպրոցը բացուել է հոկտ. 18-ից, իսկ կանոնաւոր պարապմունքները սկսուել են նոյեմբեր 1-ից, տևելով մինչ յունիս 4։ Երկսեռ սաների թիւը հասնում էր 28-ի, 5 աղջիկ և 23 տղայ որոնցից 27 Թաղիաբադից, 1 Կարավերանից։ Դպրոցն ունէր 3 բաժանմունք։ Ուսուցիչը անցեալ տարուայ նման աւելի հոգ տարել և ուշադրութիւն է դարձրել հայոց լեզուի վրայ, ըստ որում ամբողջ գաւառը Թրքախօս է, իսկ երեխաները կանոնաւոր թուրքերէն անգամ չգիտեն։ Այսպիսի շրջաններում ուսուցչի աշխատութիւնը կրկնակի և դաժանելի է։

Չնայելով որ Միանդուաբ գաւառամասում գտնւում են 5 հայ գիւղեր, 78 տուն բնակչով, դպրոց յաճախում են միայն 28 աշակերտ, այն էլ մեծ մասամբ Թաղիաբադից, մինչդեռ Միանդուաբը պիտի տար առնուազը սաների 60—70 թիւ։ Այս գաւառի հայ ազգաբնակութեան քաջ ծանօթ պիտի լինի այն հանգամանքը, որ այս ճիգ ու ջանքը անւում է յատկապէս իր գաւակի բարօրութեան, մարդավայել ապրուստի համար։ Ընկերութիւնս լիայոյս է, որ առաջիկայ ուս. տարեշրջանում երկսեռ սաների թիւը կկրկնապատկուի, չնայելով համայնքի տնտեսական աննպաստ պայմաններին։

Ի նկատի առնելով, որ ամբողջ գիւղում չկայ մի շատ ու քիչ շնորհքով տուն ուսուցչի բնակութեան համար՝ վարչութիւնս հոգաց այդ կարիքը՝ դպրոցին կից շինել տուեց 2 սենեակ և 1 նախասենեակ իրանց ներքնայարկերով — մառաններով ու 1 խոհանոց և շրջապատել տուեց պարիսպով։

Դպրոցը, ինչպէս յայտնի է, պահւում է հանգուցեալ Արամ Ղազարեանի կտակած գումարից ստացուած արդիւնքով։

ԻՔԻ—ԱՂԱՋԻ ԴՊՐՈՑԸ

Որմի գահատում

Դպրոցի բացումը տեղի է ունեցել դեկտեմբերի ըսկզբին 11 աշակերտով, որոնց թիւը հետզհետէ աճելով հասել է 26-ի։ Կանոնաւոր յաճախել են 22 հոգի։ Դպրոցն ունէր 1 բաժանմունք։ Ուսուցումը տևել է մինչ ապրիլ վերջ, դաշտային զբաղումների պատճառով։ Դպրոցը, որ հիմնուել է 1899-ին, և բոլորել է իւր վեցամեայ շրջանը,

պահւում է ընկերութեանս հաշուով, թէև անցեալ տարեշրջանի տեղեկագրում լիշատակուած է մտցնել Մեծ. Պրն. Տիգրան Աֆրիկեանի դպրոցների շարքում, բայց վարչութիւնս նպատակայարմար համարեց Փագիբէգլուի նորաբաց դպրոցը դնել բարերարի հովանաւորութեան ներքոյ երկսեռ լինելու պատճառով։

Տեղացիք նպաստ են տուել ուսուցչին մօտ 300 ղռ։

ԻԻՐԳԻԻԹԻ ԴՊՐՈՑԸ

Ղարադաղում

Ինչպէս անցեալ տարեշրջանի տեղեկագրից յայտնի է Աղաղանի դպրոցը աշակերտների սակաւութեան և տեղացիներից շատերի դպրոցի դէմ բռնած վնասակար ընթացքի պատճառով տեղափոխուեց Իւրգիւթ գիւղը, որի համար տեղացիք քանիցս խնդրամատոյց են եղել։ Իւրգիւթնեցիք քաջ ըմբռնելով ուսման ու կրթութեան յարգն ու նշանակութիւնը՝ ինքնաբերաբար, համայնական ծախքով կառուցել են բաւական գեղեցիկ դպրոցական շէնք և խոստացել են տալ պարբերաբար տարեկան 400 ղռան նպաստ։ Պատիւ այսպիսի հասարակութեան։ Դպրոցն այս տարի ունէր 35 աշակերտ և 2 աշակերտուհի, 3 բաժանմունքով. պահւում է ընկերութեանս հաշուով։

Ի դէպ է նկատել, որ նախկին Փայտակարանի (Ղարադաղ) նման բազմահայ նահանգը, ուր գտնւում են բազմաթիւ հայ գիւղեր, զուրկ է կրթութեան փրկարար լոյսից։

ՂԱՐԱՋԱԼՈՒԻ ԴՊՐՈՑԸ

Որմի գահատոմ

Այս նորաբաց դպրոցը հիմնուեցաւ ներկայ 1904—5 ուսումնական տարեշրջանում և զանազան նախապատրաստութեանց պատճառով բացուեցաւ դեկտեմբերին 14 աշակերտով, որոնց թիւը յունուարին հասաւ 17-ի։ Յաճախում էին նաև 3 փոքր ինչ գրագէտ երիտասարդներ։ Աշակերտները կազմում էին երեք բաժանմունք։ Դպրոցը զուրկ է յատուկ շէնքից։ Այս դպրոցը նոյնպէս բացուել է Մեծ. Պրն. Տիգրան Աֆրիկեանի հաշուով և երկսեռ պիտի լինի։

ՆԱԽԻՋԵՒԱՆ—ԹԷՓԷԻ ԴՊՐՈՑԸ

Նազլու—Ջայ գահատոմ

Ներկայ ուսումնական տարեշրջանն սկսուել է սեպտեմբեր 23-ից և տևել է մայիս վերջ։ Երկրագործական պարապմունքների պատճառով կանոնաւոր դասաւանդութիւնն սկսուել է նոյեմբերին։ Հոկտեմբերին աշակերտների մաքսիմումը եղել է 20, իսկ ձմերային ամիսներում 60։ Աշակերտները կազմում էին 4 բաժանմունք. ա. բաժանմունքը 1 ստորաբաժանումով, իսկ աշակերտուհիները թուով 29, կազմում էին 2 բաժանմունք 1 ստորաբաժանումով և ծաղկոցով։ Աշակերտուհիների մաքսիմումը եղել է հոկտեմբերին 14, իսկ ձմերային ամիսներում 30։ Ուսուցումը տե-

ւել է 5 1|2 ամիս, մի հանգամանք, որի վրայ հրաւիրւում է ծնողների ուշադրութիւնը. կանոնաւոր յաճախելը դպրոցի յառաջադիմութեան միակ գրաւականն ու գաղտնիքն է։ Նոյեմբերին ուսուցչի ջանքերով ձեռնարկուել է հանգանակութեան, որից գոյացել է 28 թուման. այդ դրամով շինուել է 6 զոյգ դրասեղան-նստարան և հոգացուել է դպրոցական շէնքի թերութիւնները։

Բ. տարին է, որ դպրոցը երկսեռ է, որի ծախքը նոյնպէս մարդասիրաբար յանձն է առել և հոգում է Մեծ. Պրն. Տիգրան Ա.Փրիկեանը։

ՈՐՄԻԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԸ

Համառոտ քաղաքում

Ցայտնի է, որ ընկերութիւնս իր առանձին հոգածութեան առարկայ է շինել Որմիոյ դպրոցը, ձգտելով դարձնել նրան գաւառական կենդրոնական դպրոց և քայլ առ քայլ մերձենում է իր փայփայած նպատակին։ Աւետում ենք, որ ներկայ 1904—5 ուսումնական տարեշրջանում բացուեցաւ օրիորդաց մասը—դպրոցը երկսեռ դարձաւ։ Դասաւանդութիւնը սկսուել է սեպտեմբերին, տևելով մինչ յունիս 10-ը։ Աշակերտները, թուով 32 հոգի, կազմում էին 4 բաժանմունք։ Աշակերտներ յաճախում էին նաև մօտակայ Զհարբախշ գիւղից։ Այս միակ դպրոցն է, որ բոլորում է 9 ամսեայ կանոնաւոր շրջան։ Սաներից ոմանց ընտանեկան լեզուն ասորերէն է, որովհետև ծնողներից մէկը կամ միւսը խօսում է այդ լեզուով։ Օրիորդաց մասը, որ զետեղուած է առանձին վարձու շէնքի մէջ, սկսուել է հոկտեմբերին գրասեղան-նստարանների և շինութեան կարևոր նորոգութեան պատճառով։ Ուսանում էին 21 աշակերտուհի 2 բա-

ժանմունքով։ Տարուայ ընթացքում կատարուել է 2 դպրոցական հանդէս, մասնակցել են Վարդանանց տօնի հանդիսին տղայոց դպրոցում, տրուել է 4 և 7 ամսեայ հրապարակական հարցաքննութիւն, կատարուել են դաշտային ըզբօսանքներ գարնանային ամիսներում. ուսման շրջանը տեւել է 7 ամիս։ Գրասենեակ-նստարանների, վառելափայտի ծախքը և ինչպէս և շինութեան վարձը հոգացել է տեղական հոգաբարձութիւնը, որին ընկերութիւնս հրապարակապէս իր սրտագին շնորհակալութիւնն է յայտնում։

Դպրոցիս բարերարն է Մեծ. Պրն. Ալէքսանդր Մելիք Ազարեանը, որ տարեկան 300 ռուբլի նպաստ է տալիս։

ՌԱՀՈՒԱՑԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԸ

Որոմի Շահնազ-Հայ Դաստարանում

Այս երկսեռ դպրոցի բացումը տեղի է ունեցել հոկտեմբերին, իսկ կանոնաւոր դասաւանդութիւնը սկսուել է դեկտեմբերին, դաշտային պարապմունքների աւարտից յետոյ և տևել է մինչև Զատիկ (ապրիլ 17), որից յետոյ աշակերտների թիւը հետզհետէ սկսել է նուազել նոյն պատճառով։ Տնտեսական ծանր դրութիւնը ստիպում է ծնողներից շատերին անժամանակ հեռացնել դպրոցից իրանց երեխաներին, որոնք երկրագործական զբաղմունքների ժամանակ օգնում են մեծերին...։ Աշակերտները թւով 50 կազմում էին 4 գլխաւոր բաժանմունք, իսկ աշակերտուհիները 30, 3 բաժանմունք։ Ուսուցիչը իր յատուկ ուշադրութեան առարկայ է շինել տղայոց դ. և դ. բաժանմունքները։ Ունևոր աշակերտներին դասական պիտոյքները դրամով է մատակարարուել, իսկ չքաւորներին՝ ձրի, ձրիակերութեան վնասակար սովորութեան առաջն առնելու համար։ Գիւղը,

որ բաղկացած է 160 տնից, ունի իր յատուկ դպրոցական շէնքը, որի ինչ ինչ մասերը թերի են։ Հանգանակութեամբ շինել են տրուել 13 գրասեղան-նստարան, 2 գրատախտակ, և մի լենտրան, շէնքի պակաս մասերից շինուել է ընդարձակ պատշգամբը։ Շնորհակալութեան արժանի է տեղացիների եռանդը այս գործում, յուսով ենք, որ շուտով կհոգացուին շէնքի մնացած թերութիւններն ևս։

Դպրոցը, որ հիմնուել է 1898 թուին, պահւում է նոյնպէս Մեծ. Պրն. Տիգրան Ա.Ֆրիկեանի հաշուով։

ՖԱԳԻԲԷԳԼՈՒԻ ՆՈՐԱՌԱՑ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԸ

Նուազուկ-Հայ գաւառամասում

2172

Ֆագիբէգլու գիւղը գտնուում է Բադըլբոյի (47 տ. հայ), Գեարդաբադի (150 տուն) և Զէյնալուի (4 տուն 23 հոգի) կենդրոնում և ունի 60 տուն բնակիչ՝ բաղկացած հայերից և ասորիներից։ Հայերը կազմում են բնակչութեան կէսը՝ 30 տուն 173 անձով։ Ասորիները տարիներից ի վեր պահում են մի դպրոց (եթէ կարելի է այսպէս ասել), ուր յաճախում էին հայ մանուկները...։ Ցիշեալ չորս գիւղերից բաղկացած շրջանում նպատակայարմար համարուեցաւ դպրոց հիմնել, որի բացումը տեղի է ունեցել հոկտ. 14-ին, իսկ կանոնաւոր դասաւանդութիւնն սկսուել է նոյեմբերի կէսից։ Աշակերտ-աշակերտուհիները թուով 48 (32 տղայ, 16 աղջիկ) կազմում էին 3 բաժանմունք։ Դաշտային աշխատանքները սկսուելուց յետոյ էլ մինչև յունիս 11 յաճախում էին 14 աշակերտ և 1 աշակերտուհի։ Կանոնաւոր կերպով յաճախում էր նաև 4 տարուայ մի հարս և ուշի ուշով սովորում. կային նոյնպէս 4 ասորի աղջիկներ։ Գովելի է սանուհիների եռանդը, որոնք կարդալ-գրելը նախապատիւ

են համարում ձեռագործից։ Բաղբերդոյից երթևեկում էին 7 աշակերտ։ Ուսուցիչը առանձին ուշադրութիւն է դարձրել գ. բաժանմունքի վերայ և աշխատել է ըստ հնարաւորութեան մտցնել աշակերտների մէջ գրական բարբառի կիրառութիւնը։ Նոր տարուայ աւելթով տրուել է մանկական հանդէս և երկսեռ սաներին բաշխուել է մատիտ և թուղթ։ Տարուայ ընթացքում կատարուել են մի քանի շրջագայութիւններ գիւղի մերձակայքում իրաղնական նպատակով։ Դպրոցը զուրկ է իւր յատուկ շէնքից. նա զետեղուած է ժամանակաւորապէս մի տան մէջ, որ շատ անյարմարութիւններ է ներկայացնում, իսկ գիւղը միջոց չունի ամբողջապէս իր վրայ վերցնելու շինութեան ծախքը,

Այս նորաբաց դպրոցի ծախքը ևս հոգում է Մեծ. Պրն. Տիգրան Աֆրիկեանը։

Ցիշեալ դպրոցներում, որոնցից 2-ը պահւում է ընկերութեանս, իսկ 9-ը բարերարների հաշուով, այս տարի ուսանում էին միջին թուով 390 երկսեռ սաներ՝ 260 աշակերտ և 130 աշակերտուհի։ Ձմերային ամիսներում այդ թիւը ստուարանում է։ Դպրոցներից 5-ը միայն 4 հիմնական բաժանումներ ունէր։ Աշակերտների այս թիւը ստացուել է 450 տուն հայ ազգաբնակութիւնից։ Ուսանդուել են հետևեալ առարկաներ՝ Կրօն, Հայոց լեզու, Թուաբանութիւն, Իրաղնութիւն, Հայրենագիտութիւն, Հայոց պատմութիւն և Հայաստանի աշխարհագրութիւն, Գծագրութիւն, Գրութիւն, Երգեցողութիւն (ազգային և եկեղեցական), Մարմնամարզութիւն և Ձեռագործ, տրուած ծրագրի համեմատ։ Ուսուցչական խումբը ի նկատի ունենալով աշակերտների ընդունակութեան ու զար-

դացման չափը, տեղական տնտեսական հանգամանքները և ուս. տարուայ կարճութիւնը՝ մշակել է մի նոր ծրագիր, ուղեցոյց ունենալով հինը և տարիների փորձը, որ մասնագէտ և կարող անձանց կողմից քննութեան ենթարկուելով կտրուի ի գործադրութիւն։ Բացի նախապատրաստական ժողովներից տարուայ ընթացքում կայացել է 4 ընդհ. ուսուցչական ժողովներ դպրոցական զանազան հարցերի մասին, իսկ մասնաւոր գումարումներ խիստ յաճախ են տեղի ունեցել։ Որմից դպրոցի ուսուցիչ պ. Սենեքերիմ Տէր-Յակոբեան Չելեբեանը, որ միևնոյն ժամանակ վարում է տեսչական պաշտօն, օգտուելով իւրաքանչիւր պատեհ առթից, իր անմիջական այցելութիւններով աշխատել է մօտից ծանօթանալ դպրոցական գործի հետ։ Կատարել է 26 այցելութիւններ՝ Ողջա-Ղալա, Բաբառու, Գեալդաբադ, Դիզաթէքէ, Իքի-Աղաջ, Դիգեալա, Ղարաղրզ, Ղարաջալու, Նախիջևան-Թէփէ, Ջիրաբադ, Ռահիմաբադ և Փաղիբէգլու գիւղերում, հսկելով և իրագեկ լինելով ուսումնարաններին և պայմաններին։ Ցիշեալ գիւղերից մի քանիսի դպրոցների վրայ, որոնք պահւում են տեղական միջոցներով, բարոյապէս հսկում է ընկերութիւնս։

Քաղցր պարտականութիւն ենք համարում աւետելու, որ շրջիկ տեսչի պաշտօնն աւելի արդիւնաւոր կացուցանելու և դպրոցները յառաջադիմութեան շաւղի վրայ դնելու համար, համաձայն վարչութեանս խնդրանաց Մեծ. Պրն. Տիգրան Աֆրիկեանը մարդասիրաբար յանձն առաւ հոգալու այդ կարիքն։ Ս. Տեսուչը ազատ կլինի դասերից և հնարաւորութիւն կունենայ տարուայ ընթացքում մի քանի անգամ այցելելու բոլոր դպրոցները, իւրաքանչիւր գիւղում 1—2 շաբաթ մնալով։

Մխիթարական երևոյթ է, որ հայ շինականը սկսել է համակրանքով վերաբերուել իր զաւակի կրթական գործին. նա կարծես արթնանալով դարևոր թմրութիւնից՝ թօթա-

փում է իրանից ազիատութեան ու նախապաշարման փոշին և զգալով իր անհատական ու հասարակական պարտականութիւնները՝ որոշ չափով նպաստում է իր տեղական համայնական կարիքներին, հետևապէս ոչ կոխում ինքնաճանաչութեան, գիտակցութեան շաւղի վրայ . . . ։ Սկսուած գործունէութիւնը դեռ իր խանձարուրի մէջ է. դեռ ո՞րքան պարտականութիւններ կան իրագործելի, որոնք կարօտ են արտաքին նիւթական և բարոյական օժանդակութեան, որով միայն հնարաւոր կլինի լաւագոյն հիմքերի վրայ դնելու Ատրպատականի հայ գեղջուկի կրթութեան ս. գործը . . . ։ Արտաքին օգնութիւնից կախում ունի ընկերութեանս գործունէութեան ընդլայնումը . . . ։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՆ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ընկերութիւնս տարիներից ի վեր պահում է քաղաքումս 2 մանկապարտէզ՝ Ղալայում և Լիլաւայում։ Ղալայի մանկապարտէզը այս տարի յաճախում էին միայն 9 երկսեռ սաներ, մինչդեռ անցեալ ուս. տարեշրջանում ուսանում էին 45 հոգի։ Թոշակաւորում դանձուել է միայն 2 հոգուց։ Քաղաքումս տիրող համաճարակի պատճառով ծնողներից շատերը երեխայ չուղարկեցին մանկապարտէզ։

Լիլաւայի մանկապարտէզը յաճախում էին 30 երկսեռ սաներ (15 տղայ և 15 աղջիկ), որոնցից 20-ը թոշակաւոր և կիսաթոշակ էին, իսկ 10-ը ձրիավարժ։ Աւանդւում էին հետևեալ առարկաները՝ տարրական գիտելիքներ (խաղալիքների, պատկերների և դանազան իրերի միջոցով) թուաբանութեան, կենդանաբանութեան, բուսաբանութեան, դծագրութեան, աշխարհագրութեան (աւագից շինել բնական մասը), ձեռագործ (հիւսել, կողովներ, կապերանքներ, կարել և այլն), մանկական երգեր և ոտանաւոր, վոքրիկ բարոյակրթական պատմութիւններ, ծանօթութիւն տառերի, մեծերի հետ, դծագրութիւն, պարեր և մարմնամարզութիւն։ Ընծաներ՝ 6 գունաւոր գնդակներ, խորանարդ, քառակուսի, քառանկիւնի, եռանկիւնի և ցիլինդր բոլոր վարժութիւններով. գլխաւոր գոյները, երկրորդական գոյների պատրաստելը. մարմնի գլխաւոր և երկրորդական մասերը, հինգ զգայարանք և այլն։

Ընկերութիւնս 1904—5 ուս. տարեշրջանի ընթացքում տուել է տարեմուտի երեկոյին և յունուար 1-ին 2 ոճնածառ՝ Լիլաւայում և Ղալայում մասնակցութեամբ 2

թաղի երկսեռ դպրոցների, ստացուած զուտ արդիւնքը կիսելու պայմանով (առաջնում վիճակահանութեան են տրուել ընկերութեանս և օր. դպրոցի ձեռագործները), իսկ ապրիլ 30-ին երկու թաղերի սիրողների բարեհաճ մասնակցութեամբ կազմակերպուեցաւ մի ներկայացում յօդուտ ընկերութեանս։ Ցնծածառերին երեխաներին բաշխուել են շաքարեղէն և խաղալիքներ։ Վարչութիւնս հրապարակապէս իր խորին շնորհակալութիւնն է յայտնում այն յարգելի տիկիններին, օրիորդներին և պարոններին, որոնք սիրայօժար կերպով յանձն առան տանելու գործի կազմակերպութեան ծանրութիւնը։

Ընկերութիւնս Ղալայի մանկապարտէզում պահում է առանձին դրադարան-ընթերցարան, որ ստանում է բաւականաչափ պարբերական թերթեր։ Դրադարանն ունի 500-ից աւելի ընթ. գրքեր, բայց ափսո՜ս, որ մեր ինտելիդէնտ համարուած տիկիններն ու օրիորդները չեն օգտուում այս պատեհութիւնից։ Մի՞ւ են մեր ընթացաւարտ օրիորդները...։

Այն տարեշրջանում ընկերութիւնս ունէր 85 տարեկան (տարեկան անդամուհիներից իրանց անդամավճարը՝ 20 զուտ տուել են՝ 61 հոգի), 41 մշտական (մշտական անդամուհիների շարքը մտաւ տիկին Եղիսաբէթ Զոհրաբեան, Համադանից) և 12 Պատուաւոր անդամուհի և անդամ. ընդամենը 138 հոգի։

Տարուայ ընթացքում ընկերութեանս դործերի վերաբերմամբ կայացել են 23 վարչական և 3 ընդհ. ժողով։

Հաշիւներով, դպրոցների տեղեկագրով և աշակերտների գրաւոր աշխատութիւններով հետաքրքրուող անձինք կարող են դիմել վարչութեանս և մանրամասն բացատրութիւն ստանալ։ Ընկերութեանս յառաջադիմութեան և զարդացման մասին արուած անկեղծ խորհուրդներն ու փաստացի նկատողութիւնները վարչութիւնս ամենայն պատրաստակամութեամբ կլսէ։

Խնդրւում է դրամական նպաստ, դասական առարկաներ, ընթ. գրքեր, պարբերական հրատարակութիւններ, նամակ և այլն ուղարկել հետևեալ հասցէով՝

Société Unie bienfaisance des dames
Arméniennes de Tauris
à Tauris (Perse)

Ծանօթ. ընկերութեանս տարեկան անդամները վճարում են 4 ռուբլի (Ռուսաստանի համար), 20 դրան (Պարսկաստանի համար), մշտական անդամուհիները միանուագ 50 ռուբլի (Պարսկաստանի համար 25 թուման), իսկ Պատուաւոր անդամ անդամուհիներին ընտրում է ընդհ. ժողովը, նայելով նրանց ընկերութեանս մատուցած բարոյական և նիւթական աջակցութեան չափին։ Ցանկացողներին ընկերութեանս Կանոնադրութիւնն ուղարկւում է ձրի։

Վարչական անդամուհիների կազմը՝
Նախագահ՝ Սրբուհի Ամատունի
Գանձապահ՝ Աննա Ալէքսանեան

Խորհրդականներ՝
Արծուիկ Նազարբէգեան
Զապէլ Եղիազարեան
Հեղինէ Թօրժ
Մարան Նազարբէգեան

7 Օգոստոսի 1905
Թաւրիզ

ՄՈՒՏՔ Հաշուեցոյց 1904 Յուլիս 1-ից

	դրամ	կոպ.	դրամ	կոպ.
Դրամագլուխ առ 1-ն Յուլիսի 1904			56399	49
Ստացուած անդամավճարներ	1320	—		
,, թոշակագրամներ	750	—		
,, նպաստներ	16487	27		
,, տոկոսներ	5150	76		
Ներկայացումից և տօնած առներից	3570	—		
Զանազան մուտքեր	84	70		
Ա. Ղազարեան [illegible] Տակը	3374	75	30737	48
			87136	97

մինչ 1905 Յունիս 30 **ԵԼՔ**

	դրամ	կոպ.	դրամ	կոպ.
Բաբառուի դպրոցի ծախքը	2397	05		
Դերբէլէքի ,, ,,	1149	70		
Դիզաթէքէի ,, ,,	2473	30		
Ս. Ղազարեան ,, ,,	3374	75		
Իքի-Աղաջի ,, ,,	406	80		
Իւրգիւթի ,, ,,	639	40		
Ղիլաւայի մանկապարտէզի	2447	20		
Ղալայի ,, ,,	3351	85		
Ղարաջալուի դպրոցի ,,	1284	75		
Նախիջևան-թէփէի ,,	2304	20		
Ոլմիի ,, ,,	3122	65		
Ռահուայի ,, ,,	2551	85		
Փագիրէգլուի ,, ,,	2763	35		
Զանազան ծախքեր, ռոճիկներ և այլն	4092	20		
Ս. Աննայեան դպրոցի դ. դաս. նպաստը	3000	—		
Զանազան նպաստներ տուած	2265	20	37624	25
Դրամագլուխ առ 1-ն Յուլիսի 1905			49512	72
			87136	97

ՄՈՒՏՔ Հաշուեկշիռ Ա. Ղազարեան դպրոցի

	դրամ	կոպ.	դրամ	կոպ.
Դրամագլուխ առ 1-ն Յուլիսի 1904			49890	70
Ստացուած տոկոսներ			4767	08
			54657	78

1904 Յուլիս 1-ից մինչ 1905 Յունիս 30 ԵԼՔ

	դրամ	կոպ.	դրամ	կոպ.
Դպրոցական ծախք ըստ ցուցակի			3374	75
Դրամագլուխ առ 1-ն Յուլիսի 1905			51283	03
			54657	78

277

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0533731

Ukm
277